

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Պ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈՍՄԻ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բուլղարիայի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, առաջնորդվելով փոստի և հեռահաղորդակցության բնագավառում համագործակցությունը խրախուսելու ցանկությամբ, որը հիմնված կլինի բարենպաստ և արդար պայմանների վրա, երկու ժողովուրդների բարեկամական ավանդույթների ոգով, ընդունելով, որ հաղորդակցությունները այս համագործակցության խթանման կարևոր միջոց են հանդիսանում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև փոստային և հեռահաղորդակցության կապերը կհիմնվեն՝ համաձայն Համաշխարհային փոստային միության, միջազգային հեռահաղորդակցության միության, փոստի և հեռահաղորդակցության եվրոպական խորհրդածողովի ակտերի և առաջարկությունների, համապատասխան ազգային օրենսդրությունների, ինչպես նաև սույն Համաձայնագրի հիման վրա:

Հոդված 2

Իրենց իրավասությունների սահմաններում Կողմերը կծեռնարկեն բոլոր միջոցները, որոնք ուղղված կլինեն երկու պետությունների միջև փոստային և հեռահաղորդակցության կապերի շարունակական զարգացմանը և կատարելագործմանը, ինչպես նաև դրանց հուսալիության և արդյունավետության ապահովմանը:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն որևէ երրորդ երկրի համար նախատեսված կամ երրորդ երկրից փոստային ու հեռահաղորդակցության ծառայությունների և ռադիոհեռուստատեսային ծրագրերի հաղորդումը իրենց տարածքով երկու Կողմերի համար առավել բարենպաստ պայմաններով:

Հոդված 4

Տարերային աղետների և անհաղթահարելի ուժերի դեպքում Կողմերից յուրաքանչյուրը առաջնահերթորեն մյուսին կտրամադրի իր ազգային ցանցով և հեռահաղորդակցության միջոցներով հաղորդակցությունների տարածման հնարավորություն:

Հոդված 5

- Կողմերը կիրագործեն համագործակցությունը՝
 - տեղեկատվության և փաստաթղթերի հիմնավորում,
 - երկկողմ խորհրդակցություններ,
 - փորձագետների և աշխատանքային խմբերի այցելություններ,
 - մասնագետների փոխանակում,
 - համագործակցության այլ եղանակներ:
- Սույն Համաձայնագրով նախատեսված գործունեության հետևանքով առավել սերտ համագործակցության համար կառաջարկվեն կոնկրետ հարցեր՝ որպես երկու Կողմերի միջև հետագա համաձայնեցված գործողությունների դրսևորում:

3. Այս նպատակով, անհրաժեշտության դեպքում և փոխադարձ համաձայնության դեպքում, փոստային և հեռահաղորդակցության ծեռնարկությունների միջև կարող են կնքվել պայմանագրեր՝ նշելով համապատասխան ժամկետացանկը, ինչպես նաև այդ պայմանագրի կատարման և բարեհաջող իրագործման պատասխանատու ստորաբաժանումները ու անձանց:

Հոդված 6

Կողմերը պայմանավորվում են համագործակցել դիրքորոշման մշակման ընթացքում և փոխադարձ օժանդակություն ցուցաբերել փոստի և հեռահաղորդակցության բնագավառներում մասնագիտացված կազմակերպությունների խորհրդատվություններին ու ֆորումներին մասնակցելու դեպքում:

Հոդված 7

Փոստային և հեռահաղորդակցության ծառայությունների ազգային մարմինների իրավասությանը վերաբերող ոլորտներում Կողմերը կիրադրեն անմիջական համագործակցություն հետևյալ հարցերի շուրջ.

- լիցենզիոն ռեժիմ հաստատող և ծառայություններն ազատականացնող ազգային օրենսդրական ակտերի զարգացում և կիրառում,
- հեռահաղորդակցության և փոստային սեկտորներում տնտեսական և ֆինանսական շուկայական սկզբունքների սահմանում (որոշում),
- ռադիոհաճախականությունների սպեկտրի օպտիմալ օգտագործում և այս ոլորտում տարիֆային սկզբունքների կիրառում,
- հեռահաղորդակցության տերմինալ սարքավորումների տիպերի հաստատում և այդ հաստատումների փոխադարձ ընդունում,
- ստանդարտացում,
- Կողմերի ազգային կարգավորիչ մարմինների կազմակերպումը, կառուցվածքը և գործառույթները,
- այլ հարցեր՝ փոխադարձ պայմանավորվածությամբ:

Հոդված 8

Փոստային և հեռահաղորդակցության շահագործման ոլորտում Կողմերը կաջակցեն օպերատորների միջև անմիջական համագործակցությանը և փոխհաշվարկների կատարմանը:

Հոդված 9

Փոստային և հեռահաղորդակցության սարքավորումների հետազոտման և նախագծման, ինչպես նաև մասնագետների վերապատրաստման ոլորտում Կողմերը կառաջարկեն և կաջակցեն անմիջական համագործակցություն համապատասխան մասնագիտացված հիմնարկների միջև:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը չի ազդի Կողմերի իրավունքներին և պարտականություններին, որոնք բխում են նրանց՝ այլ երկկողմ կամ բազմակողմ միջազգային համաձայնագրերից:

Հոդված 11

1. Սույն Համաձայնագիրը լիազորված են իրականացնելու հետևյալ իրավասու մարմինները. Հայաստանի Հանրապետության կողմից՝ փոստի և հեռահաղորդակցության նախարարությունը, Բուլղարիայի Հանրապետության կողմից՝ փոստի և հեռահաղորդակցության կոմիտեն:
2. Իրավասու մարմինների հետ կապված որևէ փոփոխության դեպքում Կողմերը ժամանակին կտեղեկացնեն միմյանց այդ մասին:

Հոդված 12

Սույն Համաձայնագրով ձեռք բերված տեղեկությունը չի փոխանցվի որևէ երրորդ կողմի առանց այդ տեղեկությունը ներկայացրած Կողմի գրավոր համաձայնության:

Հոդված 13

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ու կիրառման ընթացքում ծագած բոլոր վեճերը Կողմերի միջև կլուծվեն անմիջական բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 14

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է սույն Համաձայնագրի վերաբերյալ գրավոր փոփոխություններ և լրացումներ առաջարկել, որոնք կհամաձայնեցվեն բանակցությունների միջոցով:

2. Նախորդ կետում նշված փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում նշված կարգով:

Հոդված 15

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի ծանուցումներից երկրորդի ստացման օրվանից, որով Կողմերը կտեղեկացնեն միմյանց իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կլինի 5 տարի ժամկետով՝ սկսած ուժի մեջ մտնելու ամսաթվից, որից հետո դրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի մեկ տարի ժամկետով, այնքան ժամանակ մինչև Կողմերից մեկը չտեղեկացնի մյուսին Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին յուրաքանչյուր ժամկետի լրանալուց 6 ամիս առաջ:

Հոդված 16

Սույն Համաձայնագրի կատարման վերաբերյալ երկու Կողմերի միջև թղթակցությունը կիրազորվի անգլերեն: Այդ կազմակերպությունների և ձեռնարկությունների միջև թղթակցության լեզուն կհաստատվի փոխադարձ համաձայնությամբ:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվականի դեկտեմբերի 1-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բուլղարերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը նույնական են և հավասարազոր:

Մեկնաբանության ժամանակ տարակարծության դեպքում հիմք կհանդիսանա անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի հուլիսի 3-ից: